



ԱՄՍԷ - ԱՄԻՍ

ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԴԵՐԸ
ԱՅԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Երբեմնայ ազգային եւ մտաւորական կեանքի մէջ կա-
րեւոր դեր կատարած արեւմտահայ եւ արեւելահայ բը-
ժիշկներու մասին՝ փառիկի Ռամկ. Ա. Ակումբին կողմէ հրա-
պարակային բանախօսութիւն մը կազմակերպուած էր, Յունուար Իին: Նախագահը Պ. Զօսմանեան՝
վեր հանեց Տքթ. Շիշմանեանին, — աւելի ծանօթ «Երբէն» գրական ծածկանունով — դերը իբրեւ
ազգային գործիչ, գրագէտ եւ ուսուցիչ: Յետոյ խօսեցաւ Տքթ. Վ. Թորգոմեան 50ական
Յուսակներու արեւմտահայ բժիշկներու այն խմբակի մասին, զոր «կը բաղկացնէին Տքթ.
Նահապետ Ռումեանեան, Տքթ. Բարունակ Ֆէրուհիսան, Տքթ. Ստեփան Ապանեան, իրենց գը-
լուի ունենալով նշանաւոր Տքթ. Սերվիշկեր»:

Տքթ. Սերվիշկե՛ն՝ անած ու մեծցած 1830ի Ֆրանսական Բ. յեղափոխութեան ազատա-
շունչ զաղափարներով, 1842 ին Եւրոպայէ դարձին՝ գլուխը կ'անցնէ այն շարժման, որ պի-
տի բարեկալը Ազգային Պատրիարքարանի անկենդան վիճակը: Սերվիշկե՛նի շանքերով կը
հաստատուին Հոգեւոր եւ Գերագոյն ժողովներ, ուսումնական ընկերութիւններ: 1857 ին՝
ընկերներուն հետ (որոնց մէջ Օտեան, Պալեան, Տատեան) կը կազմէ Ազգ. Սահմանադրու-
թիւնը եւ առաջին ատենապետը կ'ըլլայ Ազգ. ժողովին (1860):

«Ն. Ռումեանեան՝ Ազգ. Սահմանադրութեան գլխաւոր խմբագիրն եղաւ եւ չեմք պաշտ-
պանը, Բարունակ Ֆէրուհիսան՝ զօրեղ աշակից մը Ռումեանեանի եւ Սերվիշկե՛նի, Ստեփան Աս-
լանեանի՝ Սան Ստեփանոսի 16 բոլ յողութիւն անձնանքի հետեակը . . . »:

Այս չորս բժիշկները հիմնեցին ու պաշտպանեցին Ազգ. Սահմանադրութիւնը, «որ
եղաւ յողութիւն անդաստան մը, ուր առաջին անգամ ցանուեցան Հայ յեղափոխութեան վսեմ
զաղափարին հիւնուերը »:

Փրոֆ. Ազադանեանց որ պիտի խօսէր նոյն հաւաքոյթին մէջ արեւելահայ բժիշկներու
մասին, հիանդութեան պատճառով բացակայեցաւ:

Թ Ո Ր Ա Ւ Տ Ի Ն Դ Է Մ
ՊԱՏՈՒԱՍՏԸ

Փրոֆ. Զաւմէ փառիկի բժշկական կանառին տեղեկա-
ցուց Թէ մինչեւ 1 Դեկտեմբեր 1927 Յոքայտի դէմ պատ-
ուաստուած են փառիկի եւ Ֆրանսայի միւս նահանգներուն
մէջ 52.772 երախաներ, իրենց ծննդեան օրերուն: Եւ տեսնուած է, որ պատուաստին զօրու-
թիւնը կարճուածն աւելի կը տեսէ: Աւանդաւ 5 տարի կը պաշտպանէ պատուաստեալ եւ
բաժնան այն տարիքին մէջ, որ ամէնէն վտանգաւորն է: Ինչպէս ԲՈՒԺԱՆԶ այս մասին գը-
րած է, այս պատուաստը անխափ է եւ ամէն մայր պէտք է անպատճառ Յոքայտին դէմ
պատուաստել տայ իր նորածինը:

ՄԱՀԵՐՈՒ
Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը
ՖԻՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Փոլ Սմբատուի տեղեկութիւններուն համաձայն, մահե-
րը շատցած են Ֆրանսայի մէջ եւ Յոքայտի է, որ, ամէ-
նէն աւելի, կը հնձէ մատողշ կեանքերը: Այսպէս 10.000
մարդոց վըայ, որոնց տարիքն է 25—34, Ֆրանսա տուած
է 23 մահ, իսկ Անգլիա 13 մահ: Բժշկական կանառը կը խորհի ազգու միջոցներ ձեռք
առնել խնայելու համար մահուկներուն կեանքը:

Կ Ե Ղ Ե Մ Ա Տ Կ Ի Ն Դ Է Մ
Պ Ա Տ ՈՒ Ա Ս Տ

Յրանսայի մէջ կեղծմանքի (գուշ պողան, տիֆլիսի) զոհերը շատցած ըլլալով, Առողջ. Նախարարութիւնը յանձնարարեց քաղաքացիներուն որ ստիպեն ժողովուրդը կեղծմանքի դէմ պատուաստելու իրենց երախաները: Նոյնիմաստ Թելադրութիւնները ըրած է նաեւ Միացեալ Նախագահներու Առողջ. Նախարարութիւնը: Ինչպէս «Բուժմանք»ի մէջ գրուեցաւ, այդ պատուաստը (*analozone*) բոլորովին աննաս է եւ ճնողները պարտաւոր լն պատուաստել տալ իրենց 2—10 տարեկան զաւակները:

Փ Ր Ո Ց. Պ ԵՒ Ն Դ Ե Ր Ե Ւ Ի Մ Ա Տ Ը

Վերջերս, Մոսկուայի մէջ մեծաւ փռօփ. Պելագրեի, արտի կաթուածէ: Այս ուսե ջախտարանը իրրեւ հոգեբոյժ մեծ անուն ունէր գիտական աշխարհին մէջ: Ան կատարեալագործած էր իր գիտութիւնը Գերմանիոյ եւ Յրանսայի մէջ (աշակերտ Եարքօի): Եղած է ուսուցիչ քաղանի համալսարանին, յետոյ անդամ գին. բժշ. Ակադեմիային: Պելագրեի կը թողու աւելի քան 500 աշխատութիւններ, ուղեղի հիւանդութիւններու մասին, Թարգմանուած զանազան լեզուներու: Ան հիմը դրած է նաեւ Ուղեղի Ուսումնասիրութեանց կասեալի մը:

Թ Ր Ա Ւ Ո Ս Ս Ա Յ Ի Ն Մ Ի Թ Ր Ո Պ Պ Ե

Կ'ըսուի Թէ Տափուացի Նշանաւոր մանրէարան Շիտէյօ Նովուշի յաջողած է գտնել Թրախտայի մանրէն եւ այս առաջին զեկոյց մը զըկած է Ամերիկեան Բժշ. Ընկերակցութեան: Եթէ ճիշդ է այս լուրը, այսպէսով մեծ քայլ մը կ'առնուի դարմանութիւն մէջ այն հիւանդութեան, որ այնքան զոհեր խլած է Արեւելքէն, մասնաւորաբար Շայ գաղթականներէն ու Շայաստանէն:

ՈՒՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« Զ Ո Գ Ե Բ Ր Ո Յ Ժ Ն Ե Ր ՈՒ Ն »

Ամերիկայի, մասնաւորաբար Միացեալ Նախագահներուն մէջ, մարպիկ մարդիկ գրեցականք ու ազդեր կը հրատարակեն, յայտարարելով Թէ կրնան ոճամբ, քաջութիւն եւ ուժ պարգեւել» բոլոր տկարամիտներուն: Այս խարերանքներուն գործունէութեան առաջին, որոնք հազարաւոր հիւանդամիտներ կը յորթեն, բժիշկները ուշադրութիւնը հրաւիրած են Մտային Առողջապահութեան Ազգային Կոմիտէին, արգիլել տալու համար:

Զ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Է Զ

Յունուար 25ին, Երեւանի մէջ բացուեցաւ հասարակածային հիւանդութիւններու համագումար:

Նիւթերու առատութեան պատճառով, ընթերցողներու կողմէ մեզի ուղղուած հարցումներուն պատասխանները յետաձգուած են յաջորդ. Թիւին:

ԸՆԹԵՐՅՈՂ

ԴՈՒՆ ՈՐ ԿԸ ՍՐԻՆՍ «ԲՈՒԺԱՆՔ»ը, կը կարդաս եւ կ'օգտուիս, ԶԵՍ ՈՒՋԵՐ ՃԻԳ ՄԸ ԸՆՆԸ, տարածելու համար քու թերթդ, բաժանորդագրելով ծանօթներդ, որպէսզի ուրիշներն ալ կարդան, սիրեն եւ օգտուին «Բուժանք»էն եւ զարգացնեն զայն:

ԻՍԿ ԴՈՒՆ ՈՐ ՈՒՐԻՇԻՆ «ԲՈՒԺԱՆՔ»Ը ԿԸ ԿԱՐԴԱՅ, գիտցիր որ չի բաւեր կարդալ, այլ պէտք է ունենալ եւ պահել «Բուժանք»ը, որուն մէկ խորհուրդը կրնայ քանի մը անգամ փոխարինել տուած բաժնեգիրդդ:

ՈՒՐԻՆՍ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅ,